



Ի՞նչ է Համավարակի Գործազրկության Ապահովագրությունը:

Համավարակի Գործազրկության Ապահովագրությունը(PUA) նոր ծրագիր է, որը թույլատրում է ինքնազբաղված աշխատողներին, ազատատերերին, անկախ կապալառուներին, կես չափաբաժնով աշխատողներին ստանալու գործազրկության օժանդակություններ, եթե նրանք տուժվել են COVID-19-ից:

Ես իրավասու՞ եմ PUA-ի համար:

Դուք կարող եք ստանալ PUA եթե՝

1. Դուք օրինական կարող եք աշխատել Միացյալ Նահանգներում:(Ձեր օժանդակությունների չափը հիմնված կլինեն ձեր օրինական աշխատանքի թույլտվության ժամանակահատվածից):

Եվ

2. Դուք իրավասու չեք լինի նահանգի Գործազրկության Ապահովագրության, Հաշմանդամության Ապահովագրության կամ Վճարովի Ընտանեկան Արձակուրդի

Եվ

3. Դուք ի վիճակի չեք աշխատելու, որովհետև դուք վնաս եք ունեցել COVID-19-ից:

Օրինակ՝

- Ախտորոշվել եք COVID-19-ով
- Դուք փնտրում եք բուժօգնություն, որովհետև դուք ունեք COVID-19-ի ախտանշաններ
- Դուք չեք կարող աշխատել, որովհետև բուժօգնություն տրամադրող բժիշկը ասել է ձեզ ինքնամատակուսացեք
- Դուք խնամում եք ընտանիքի անդամի ով ախտորոշվել է COVID-19-ով
- Դուք չեք կարող աշխատել, որովհետև խնամում եք երեխայի, ով չի կարող հաճախել դպրոց կամ երեխայի խնամքի հաստատություն COVID-19-ի պատճառով
- Դուք թողել եք ձեր աշխատանքը COVID-19-ի պատճառով
- Ձեր աշխատավայրը փակվել է COVID-19-ի պատճառով
- Դուք անկախ կապալառու եք հաշվետու եկամուտով և ձեր աշխատանքը ազդեցություն է ունեցել COVID-19-ից

Ի՞նչ փաստաթղթերի կարիք ես ունեմ ցույց տալու, որ ես իրավասու եմ:

Դուք կարիք չունեք որևէ փաստաթղթերի դիմելու համար: Եթե Աշխատանքի Չարգացման Վարչությունը կարիք ունենա փաստաթղթերի, նրանք կկապվեն ձեր հետ: Նրանք կարող է հարցնեն եկամտահարկի վերադարձը, 1009, W-2, կամ աշխատավարձի կտրոնները:

Ինչպե՞ս ես կարող եմ դիմել PUA-ի համար:

Դուք կարող եք դիմել PUA-ի համար ճիշտ այնպես, ինչպես դուք դիմում եք կանոնավոր գործազրկության ապահովագրության օժանդակությունների համար: Առցանց դիմելու համար այցելեք՝

edd.ca.gov/Unemployment/UI_Online.htm

Դուք կարիք ունեք իմանալու հետևյալ տեղեկությունը յուրաքանչյուր գործատիրոջ մասին, որի համար դուք աշխատել եք անցած 18 ամիսների ընթացքում՝

- Ընկերության անունը և կառավարիչի անունը
- Ընկերության հասցեն և հեռախոսահամարը
- Աշխատելու թվականը
- Ստացած աշխատավարձի չափը(հարկերից առաջ), շաբաթական աշխատած ժամերը, և ժամավճարի չափը

PUA-ի մասին ավել տեղեկության համար՝

Կալիֆորնիայի Աշխատանքի Չարգացման Վարչություն, Համավարակի Գործազրկության Օգնության Տեղեկություն՝

edd.ca.gov/about_edd/coronavirus-2019/pandemic-unemployment-assistance.htm

Աշխատանքի և Աշխատուժի Չարգացման Գործակալություն, Համավարակի Գործազրկության Օգնության Ծրագիր՝ labor.ca.gov/pandemic-unemployment-assistance-pua-program/

facebook.com/CALaborAndWorkforceDevelopmentAgency/